ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№1275-Ա « 07 » ապրիլի 2025 թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ
ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ
ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի կողմից 19.12.2024 թվականին հայտարարված «ԵՔ-ԲՄԽԾՁԲ-25/14» ծածկագրով Երևան քաղաքի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքի գեղարվեստական լուսավորության արդիականացման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների գնման ընթացակարգին հայտեր են ներկայացրել «ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻԶ», «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ», «Սերպանտին Ինժեներինգ», «ԳՐԻՏԻԳ» և «ԻՐՏԻԳ» ՍՊ ընկերությունները:

Գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ, համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հրապարակվող լիցենզիաների էլեկտրոնային գրանցամատյանի, հայտ ներկայացրած մասնակիցներից «ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից) չունի գնման առարկա հանդիսացող ծառայությունների մատուցման համար պահանջվող 1-ին դասի լիցենզիա և կից ներդիրներ:

Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 67-րդ կետը, 18.02.2025 թվականին հարցում է կատարել ՀՀ քաղաքաշինության կոմիտե գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների՝ գնման առարկա հանդիսացող ծառայությունների մատուցման համար պահանջվող լիցենզիաների և կից ներդիրների առկայությունը ստուգելու նպատակով:

Համաձայն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 28.02.2025 թվականին ստացված տեղեկատվության՝ Մասնակիցը չունի գնման առարկա հանդիսացող ծառայությունների մատուցման համար պահանջվող 1-ին դասի լիցենզիա և կից ներդիրներ:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ՝ «ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված գնման հայտը գնահատվել է անբավարար և մերժվել: Գնահատող հանձնաժողովը ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչել հաջորդող տեղ զբաղեցրած քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողության 1-ին դասի լիցենզիա և կից ներդիրներ ունեցող մասնակից «Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ» ՍՊ ընկերությանը:

«ԵՔ-ԲՄԽԾՁԲ-25/14» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարությունը 27.03.2025 թվականին հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. «ՏԻԳԱ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:
3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ